ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ ՎԱՆՔԻՑ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական վիմագրերում զգալի թիվ են կազմում նվիրատվական բովանդակություն ունեցող արձանագրությունները: Հոգևոր կառույցներին նվիրատվություններն արվել են վաղնջական ժամանակներից ու շարունակվում են մինչև մեր օրերը: Դեռևս նախաքրիստոնեական շրջանում հեթանոս արքաները մեհյաններին ու բագիններին շնորհել են անշարժ և շարժական գույք՝ գյուղեր, ագարակներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, ստրուկներ, թանկարժեք սպասք և այլն[1]: Նվիրատվությունները մեծ թիվ են կազմում հատկապես IX – XIII դդ., որոնց մասին վկայություններ կան վիմական և մատենագրական սկզբնաղբյուրներում: Զարգացած միջնադարում վանքերն ու եկեղեցիներն ընդլայնում են իրենց հողատարածություններն ինչպես «պարգևականք»[2], այնպես էլ «քսակագինք»[3], «գանձագինք»[4] հողերի հաշվին[5]: Նվիրատվությունների առատությունը պայմանավորված էր նաև ժամանակի թելադրանքով, քանզի նվիրաբերությունները հնարավորություն էին տալիս նվիրատուներին տուրքերից ազատ վանքերի ու եկեղեցիների հովանու տակ ապահովել իրենց անձի ու գույքի անձեռնմխելիությունն ինչպես հողատերերի կամայականություններից, այնպես էլ պետական տուրքերից[6]: Այսպես, ստանալով համատարած բնույթ, նվիրատվությունները շարունակվում են նաև ուշ միջնադարում: Բազմաթիվ նվիրատվությունների շարքում բավականին մեծ են եղել նաև ջրաղացների, ձիթհանք - սրանոցների, հնձանների, բնակելի տների, խոշոր ու մանր եղջերավոր անասունների նվիրատվությունների թիվը[7]:

---

[1] Գ. Մ ե լ ի ք - Փ ա շ ա յ ա ն. Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 117–124:

[2] Պարգևական հողերը տրվում էին իբրև պարգև կամ վարձատրություն. տե՛ս Հայերեն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասյանց, հ. IV, Երևան, 1945, էջ 80:

[3] Քսակագինը փողով, քսակով գնվածն է կամ՝ նույն արծաթագինը. տե՛ս նույն տեղում, էջ 590:

[4] Գանձագինը հակադրվում է ժառանգությամբ ստացվածի հետ, գնվում է գանձով՝ փողով. տե՛ս Հայերեն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասյանց, հ. I, Երևան, 1944, էջ 412:

[5] Տե՛ս Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դարերում, Երևան, 1973, էջ 72:

[6] Ա շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք I, Երևան, 1957, էջ 309:

[7] Վանքերին տրվող նվիրատվությունների մասին առավել մանրամասն տե՛ս Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ., Լ. Մ ա ր գ ս յ ա ն. Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (IX–XIV դդ.), Երևան, 2007:

Էջմիածնի Ս. Հռիփսիմեի վանքի զանգակատան հարավարևելյան հիմնասյան արևմտահայաց կողմում փորագրված է նվիրատվական մի արձանագրություն՝ ընդօրինակված 2011 թ.: Արձանագրությունը չորս տողից է.



ԸՍՏԱՄԲՈԼՑԻ ԱՂԷՔՍԱՆԴՐ Վ[Ա]ՐԴ/[Ա]Պ[Ե]Տ[Ն
ԵՏՈՒ ՍԲ ՅՈՒ[Խ]Տ[ԻՍ Ծ (50) ՈՂՋԱՐ/ ՏԱՄԱԶԼՈՒԽ,
Յ[Ի]Շ[Ա]Տ[ԱԿ ՅՈՒՐՆ ԵՒ/ ԻՒՐ ԾՆՕՂԱՑՆ,
ԹՎ[ԻՆ] ՌՃՀԹ (1730) ԻՆ:

Արձանագրության նվիրատուն՝ ստամբոլցի Աղեքսանդր վարդապետը, 1730 թ. Ս. Հռիփսիմեի վանքին է նվիրում հիսուն ոչխար՝ որպես տամազլուխ՝ ի հիշատակ իրեն և իր ծնողներին:

Ամենայն հավանականությամբ, Աղեքսանդր վարդապետը նույն Աղեքսանդր Բ Բյուզանդացի կամ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսն է, որը կաթողիկոսական աթոռն զբաղեցրել է 1753 – 1755 թթ.: Նա ունեցել է Քարաքաշ (Ղարաղաշ) մականունը և հաջորդել է Մինաս Ա Ակնեցուն (1751–1753 թթ.)[8]: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը նշում է, որ Քարաքաշ մականունն այս կաթողիկոսին տրվել է, հավանաբար, «սև և թավ հոնքեր ունենալուն համար, թեպետև կարծողներ ալ կան, թե գերդաստանի ազգանուն է, և Կ. Պոլսո մեջ բանասեր Կարապետ Քարաքաշյանի ընտանիքն ալ, այժմ հռոմեադավան, իր ցեղեն կարծած է Աղեքսանդր կաթողիկոսը»[9]:

Միքայել Չամչյանցը Աղեքսանդր Բյուզանդացու կաթողիկոսության առաջին տարին համարում է 1754 թ.: Նա գրում է, որ Մինաս Ա Ակնեցի կաթողիկոսի վախճանից հետո, Էջմիածնի միաբանությունը կաթողիկոսի ընտրության հարցով խնդրագիր է հղում Կոստանդնուպոլսի Հակոբ պատրիարքին: Վերջինս ժողով է գումարում, որի ժամանակ ընտրվում է Աղեքսանդր վարդապետ Կոստանդնուպոլսեցին, որ ուներ Ղարաղաշ մականունը: Սկզբում չի ցանկանում, ապա բազում հորդորներից հետո Աղեքսանդր վարդապետը համաձայնում է և գալով Էջմիածին «օծաւ կաթողիկոս ի յաջորդ ամի ի թուին հայոց .ռմգ.

---

[8] *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 36: Տե՛ս նաև Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն. Հայկական մատենագիտություն, Ե–ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ 555-556:*

[9] *Մ. ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 3450:*

(1754) ի մարտի 6, յետ տասն ամսոց վախճանին Մինասայ»[10]:

Աղեքսանդր վարդապետի կաթողիկոս ընտրվելու հանգամանքներին անդրադարձել է նաև Գյուտ ավագ քահանա Աղանյանցը: Վերջինս «Դիվան»-ի Գ հատորի առաջաբանում գրում է. «Աղէքսանդր իբրու կաթուղիկոս: Թուին ՌՄԲ (1753), յունիսի ԻԲ (22) ի Պոլիս մեծ քաղաքն, որ կոչի Ըստամպոլ, բազմամարդ եկեղեցի սուրբ Աստուածածին, ուր Պատրիարքարանն է կոչեցին զիս նուաստս իբրու լինիլ Ամենայն հայոց կաթուղիկոս, բոլոր իշխանքն էլ ժողովրդոք, հանդերձ Յակոբ Պատրիարգ վարդապետին եւ այլ եպիսկոպոսունք, վարդապետք եւ քահանայք, աղքատք եւ ընչաւէտք… մի ձայն եւ միակամք … թուին ՌՄԳ (1754) մարտի Բ (2) յաւուր տնտեսի կիւրակէին օծեցին զանարժանս կաթուղիկոս ամենայն Հայոց եւ տնտես ազգիս արամեան մարտի ամսեանն եօթն աւուրն»[11]:

Դեռևս 1734 թ., Աբրահամ Բ Խոշաբեցի (1730 – 1734 թթ.) կաթողիկոսի գահակալման վերջին տարում, Աղեքսանդրը հիշվում է որպես վարդապետ, նվիրակ Եվդոկիայում[12]: Կաթողիկոս եղած ժամանակ ևս նա պահպանում է Եվդոկիայի հետ ունեցած կապերը, իսկ Հարություն վարդապետ Բասենցուն, որն այդ ժամանակ նվիրակ էր Եվդոկիայում (1754 թ.), կարգում է քաղաքի առաջնորդ[13]:

Նկատենք, որ նվիրակությունը, որպես Հայ եկեղեցու ներսում սկզբնավորված նոր երևույթ, զարգացման բարձր աստիճանի է հասել XVII–XVIII դարերում, երբ հայոց կաթողիկոսներն սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել նվիրակների գործունեությանը: Նվիրակը կարող էր լինել եպիսկոպոս կամ վարդապետ, որն Ամենայն հայոց կաթողիկոսի հրամանով գործում է հիմնականում հայկական գաղթավայրերում (տվյալ դեպքում՝ Եվդոկիայում)՝ կաթողիկոսի անունից հոգևոր ու բարոյական միջնորդ լինելու և հանուն Մայր աթոռի կամավոր նվիրատվությունը ժողովելու համար[14]:

Աղեքսանդր Բյուզանդացին՝ իբրև վարդապետ և աթոռակալ է հիշվում նաև Աբրահամ Գ Կրետացի (1734 – 1737 թթ.) կաթողիկոսի օրոք, երբ Նադիր շահի շքախումբը պարենի բացակայության պատճառով 1735 թ. հանգրվանում է Ապարանի Շիրաղալա (այժմ՝ Վարդենուտ) գյուղում: Կաթողիկոսը բազում ընծաներով, նվիրակներով ու վարդապետներով ներկայանում է նրան և սիրով ընդունվում: Օրեր անց, երբ Նադիր շահը հասնում է Էջմիածին, կաթողիկոսը նրան դիմավորելու համար ուղարկում է Աղեքսանդր վարդապետ աթոռակալին, որը շահին գտնում է բարկացած վիճակում՝ կաթողիկոսի չգալու պատճառով[15]:

---

[10] *Մ. Չամչյան. Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 864-865:*

[11] *Սիմեոն կաթուղիկոսի յիշատակարանը, հրատարակեց՝ Գիւտ քահանա Աղանեանց.– Դիվան հայոց պատմության, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ Է:*

[12] *Մ. ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 3331:*

[13] *Գ. Գ ա լ ե մ ք յ ա ր յ ա ն. Կենսագրություն Սարգիս արք. Սարաֆյան և ժամանակին հայ կաթողիկյայք, Վիեննա, 1908, էջ 359:*

[14] *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 812-813:*

[15] *Մ. ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 3338-3339:*

Ի դեպ, Աղեքսանդր վարդապետը Մ. Օրմանյանի կողմից հիշված է նաև աթոռակալ կոչմամբ, իսկ աթոռակալ էր համարվում կաթողիկոսի տեղապահը, որը վերջինիս բացակայության ժամանակ փոխարինում էր նրան, ինչպես նաև նրան էր հանձնված եկեղեցու գույքի կառավարումը[16]:

Աղեքսանդր Բյուզանդացու անվան հիշատակության հանդիպում ենք նաև Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսին հաջորդած Ղազար Ա Ջահկեցի (1737–1751 թթ.) կաթողիկոսի գահակալման ժամանակաշրջանում: Վերջինս Նադիր շահի հետ պահպանելով բարիդրացիական հարաբերություններ՝ 1745 թ. նրան տեսության է գնում Խորասանի Մեշեթ մայրաքաղաքը՝ իր հետ տանելով Պետրոս Այնթապցի և Աղեքսանդր Բյուզանդացի վարդապետներին, որոնք ավելի հայտնի էին Քյություր ու Քարաքաշ մականուններով[17]: Վերջիններիս նկատմամբ դավեր են նյութում Միքայել և Հովհաննես Շիրազի վարդապետները, իբր թե նրանք Ղազար Ջահկեցի կաթողիկոսի դեմ Նադիր շահին գաղտնի չարախոսել են: Մ. Օրմանյանը պատկերավոր նկարագրում է այն չարչարանքները, որ Քյություր և Քարաքաշ վարդապետներին հասցրեց Ղազար Ջահկեցին: Նա «երկուքն ալ ֆալախայի հարվածներուն ենթարկեց, ուշաթափ ընել տալու չափ, և շղթայակապ բանտարկել տվավ: Երեսուն օր մնացին այնտեղ անխնամ, հազիվ ոգեպահիկով, և տանջանքներու սպառնալիքով, և չկրցան ելլել, բայց եթե բռնի պարտամուրհակներ ստորագրելով: Բայց այն ատեն ալ իրենց կնքված սենյակները կողոպտվեցան, և իրենք ալ արգելական պահվեցան հիսուն օր ևս»[18]:

Աղեքսանդր Բ Բյուզանդացու անունով հայտնի են մի քանի մանր գրություններ, որոնցից կարևորություն ունեն Հիշատակարանը, ուր պատմվում է նրա կաթողիկոս ընտրվելու պարագաների մասին, և վրաց կաթողիկոս Անտոն I-ին (1744–1755 թթ.) ու վրաց արքա Թեյմուրազին (1744–1767 թթ.) հղած թղթերը, նաև՝ համայն հայությանն ուղղած կոնդակը՝ Արտազի Ս. Թադեի վանքի շինարարության համար միջոցներ հանգանակելու վերաբերյալ[19]:

Սիմեոն Ա Երևանցի (1763–1780 թթ.) կաթողիկոսն իր «Ջամբռ» աշխատության մեջ անդրադառնում է նաև Աղեքսանդր Բ Բյուզանդացու՝ Ազատ խանին ուղղած խնդրագրերին, որոնցից հիշարժան են հատկապես վանքերի՝ դատարկված լինելու պայմաններում հարկերի վերացման, Էջմիածնի ջրաբաշխման[20], ինչպես նաև Աղեքսանդր կաթողիկոսի խնդրագրի հիման վրա Ազատ խանի հրովարտակն Էջմիածնի մաղաֆության, այսինքն՝ հարկատվությունից ազատ լինելու վերաբերյալ խնդրագրերը: Ըստ հիշյալ հրովարտակի՝ Ազատ խանը գրում է, թե «ինչպես հնուց ի վեր թագավորներից մաղաֆ է եղել Էջմիածինը, նույնպես էլ ես եմ մաղաֆ անում (հարկերից ազատում - Ա. Հ.), ուստի ոչ ոք նրանից պիտի չպահանջի

---

[16] *Հայերեն բացատրական բառարան, հ. I, էջ 14:*

[17] *Մ. ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 3420: Տե՛ս նաև Մ. Չ ա մ չ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 827:*

[18] *Մ. ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 3421-3422: Տե՛ս նաև Մ. Չ ա մ չ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 828 -831:*

[19] *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 36: Տե՛ս նաև Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 555-556:*

[20] *Ս ի մ ե ո ն Ե ր և ա ն ց ի. Ջամբռ, Երևան, 2003, էջ 206, 268:*

բահրա, բաղաթ, մալուճհաթ, ոչխարի, անասունների, իջևանատան, ջրաղացի, դինկի, ձիթհանի, բաղնիքի և այլնի խարճ.»[21]*:*

Կաթողիկոսական աթոռն զբաղեցնելով ընդամենը մոտ երկու տարի՝ Աղեքսանդր Բ Բյուզանդացին վախճանվում է 1755 թ. և թաղվում զանգակատան ներսում՝ Մայր տաճարի գլխավոր մուտքի հարավային կողմում: Մարմարյա տապանաքարին փորագրված է հետևյալ արձանագրությունը.



ՔՍ ՈՐԴԻ ՀՕՐ ՄԻԱԾԻՆ
ԴԱՏՕՂ ԲՆՈՒԹԵ[ԱՆ]Ս ՄԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ՅՈՐԺԱՄ ՓԱՌՕՔ ԳԱՅՑ[Ե]Ս ԿԸՐԿԻՆ
ՅԻՇԵԱ ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]Բ ՔՈՅԻՆ
ԶՀ[Ա]ՅՐ[Ա]Պ[Ե]ՏՆ ՄԵՐ ԶՀՈԳԵԼԻՆ
ՋՏՐ ԱՂ[Է] ՔՍԱՆԴՐ ԲԻՒԶԱՆԴ[Ա]ՅԻՆ
ԱՐԺԱՆԱՅՈ Ս[Ր]Բ[Ո]Յ ԳԸՆԴԻՆ
ՅԱՐՔԱՅՈՒԹԻ[Ի]Դ ՄՈՅԾ ԵՐԿՆԱՅԻՆ
ՈՐ ԱՐԴ ՀԱՆԳԵԱՒ ԸՍՏ ՔՈՒՄ ԲԱՆԻՆ
ԱՍՏԷՆ ԵԴԱՒ ՄԱՐՄԻՆ ՆՈՐԻՆ
ՀԱՋԱՐ ԵՒ ՅԵՐԿԵՐԻՒՐ ՅԱՄԻՆ
ՉՈՐՐՈ[Ր]Դ ԵՒՍ ԸՆԴ ՍԸՄԱ ԲԱՐԴԻՆ
ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԵՏԱՍԱՆԻՆ[22]:

Դառնալով նվիրատվությանը՝ նշենք, որ ընտանի կենդանիների՝ ոչխարների, ձիերի, ջորիների նվիրատվությունները բազմաթիվ են վիմական արձանագրություններում, սակայն խնդրո առարկա արձանագրությունն եզակի է նրանով, որ նվիրատուն Սուրբ ուխտին տալիս է հիսուն ոչխար, որպես տամազլուխ: Այս բառեզրը, որ հազվադեպ է հանդիպում վիմագրերում, բացատրվում է, որպես «անասուն, որ պահում են բազմացնելու համար»: Այն գավառական բառ է և գործածվում է նաև տամազլրխ, տամազլրդ, դամազլրխ ձևերով[23]*: Այսինքն՝ նվիրատուն*

---

[21] *Տե՛ս նույն տեղում, էջ 314:*

[22] *Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ՝ Յովհաննես եպս. Շահխաթունեանց, հ. առաջին, Էջմիածին, 1842, էջ 229-230: Տե՛ս նաև Ղ. Ալիշան. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 224:*

[23] *Տե՛ս Հայերեն բացատրական բառարան, հ. IV, էջ 369:*

վանքին է նվիրել հիսուն արու ոչխար, որոնց պիտի պահեին տամազլուխի՝ սերունդ ստանալու նպատակով:

Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանցը գրում է, որ XVII–XVIII դարերում Էջմիածնի վանքերին տրվում էին վարելահողեր, իսկ Մայր աթոռից՝ լծկան և կթու անասուններ: Այսպես, թիֆլիսեցի (տփխիսեցի) ոմն Գոգի Ս. Գայանեի վանքին հիշատակ է թողնում ընդարձակ մի այգի, «զոր իւր արդեամբք շինեց և իւր ծախսովը հասոյց ի պտղատուութիւն»[24], Ս. Շողակաթի և Ս. Հռիփսիմեի վանքերը միաբանների համար հատկացվելիք հացն ու հանդերձանքն էլ թեպետ ստանում էին Մայր աթոռից, սակայն «նրանք ևս ունեին առատությամբ վար ու ցանք և անասունք ո՛չ սակավ, որով միաբանից ուտելիքը կպատրաստվեր»[25]:

Ի դեպ, նկատենք, որ Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու արևմտյան պատի հարավային մասում փորագրված արձանագրության նվիրատուն ևս միաբանելով Սուրբ ուխտին բազմաթիվ նվերների հետ տալիս է նաև 20 ոչխար, որը ձևակերպված է այսպես. ,...ԵՍ ԴԱՒԻԹ ԿՐԱՒՆԱՒՈՐ/ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ԵՏՈՒ ԻՄ Ի[ՆՉ]Ք [Ի ՍԲ] / ՎԿԱՅՍ, ԽԱՉԵՐ ԾԱՌԻ ԵՒ ՅԱՅՍՄԱՒՈՒ [ՐՔ] .../ ՎԵՑԿԻ ԵՒ :Ի: (20) ՈՉԽԱՐ...ե[26]:

Չիերի, ոչխարների նվիրաբերումը եկեղեցիներին վկայված է նաև մատենագրության մեջ: Այսպես՝ Հովհաննես Դրասխանակերտցու ,Պատմությանե մեջ կարդում ենք, որ Աշոտ I-ը մահանալիս (891 թ.) իր մոտ էր հրավիրել Գևորգ Բ - Գառնեցի կաթողիկոսին և խնդրել ,զերամակս ձիոց և զդասակս անդէոց և զհօտս ոչխարաց ամենեւին բնաւին բաշխել յեկեղեցիս, ուղղափառաց ի նուիրումն պատարագին սրբութեան...ե[27]:

Ամփոփենք. Ս. Հռիփսիմեի վանքի նվիրատվական վերոնշյալ արձանագրության միջոցով լուսաբանվում է ոչ միայն նվիրատվության եզակի մի օրինակ (ոչխար՝ որպես տամազլուխ), այլ նաև այն առիթ է ծառայում նվիրատուի՝ Աղեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսի կյանքի ու գործունեության մանրամասներն ի մի բերելու և հավաք ներկայացնելու գործում:

НОВОНАЙДЕННАЯ НАДПИСЬ ИЗ МОНАСТЫРЯ СВ. РИПСИМЭ

АРСЕН АРУТЮНЯН

Резюме

В монастыре Св. Рипсимэ, в 2011 г., была найдена дарственная надпись позднего средневековья. Дарителем по всей вероятности был Католикос Александр II Византийский. Он преподнес пятьдесят голов овец монастырю Св. Рипсимэ с целью их размножения. С помощью этой надписи выяв-

---

[24] *Աբել արք. Մխիթարեանց. Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 135:*

[25] *Նույն տեղում, էջ 138:*

[26] *Դիվան հայ վիմագրության, պր. III, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 213, արձ. 681:*

[27] *Յովհաննու Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 142-143:*

ляется не только то, что это пожертвование является уникальным, но и проливается свет на некоторые аспекты жизни и деятельности Католикоса Александра II (до помазания в католикосы он был вардапетом, посланцем собора в Евдокии, местоблюстителем католикоса, его преемником).

NEWLY-FOUND INSCRIPTION FROM ST. HRIPSIME MONASTERY

ARSEN HARUTYUNYAN

S u m m a r y

In 2011 a new dedicatory inscription was found in St. Hripsime monastery. The inscription goes back to late medieval times. The grantor, who was most probably Catholicos Alexander II Byuzandatsi, donated fifty male rams to St. Hripsime monastery for the purpose of reproduction. The inscription doesn't only illustrate, that this donation is exceptional, but also throws light on some aspects of life and activity of Catholicos Alexander II (before anointing as a Catholicos, Alexander was a sacramental in Eudocia, Catholicos' vicar).